ՀԱՅԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ XVIII ԴԱՐԻ 80—90-ԱԿԱՆ ԹԹ.

Պ. Ա. ՋՈՐԱՆՅԱՆ

XVIII դարի կեսերին հայերը, ինչպես և մյուս օտարերկրացիները, իրավունք էին ստացել Ռուսաստանում դատը վարելու ըստ իրենց օրենքների ու հին սովորույթների[1]։ Այդ փաստի մեջ ևս իր դրսևորումն էր գտել իշխանությունների կողմից հովանավորչական քաղաքականությունը օտար նորաբնակների[2] ու առևտրականների նկատմամբ[3]։

1779 թ. Նոր Նախիջևանի հայ գաղթօջախի հիմնադրումից հետո ստացած արտոնությունները այդ գաղթօջախին գրեցին միանգամայն այլ իրավական ու տնտեսական կարգավիճակի մեջ, քան էին մինչ այդ Ռուսաստանի այլ բաղաքներում բնակվող ոչ միայն հայերը, այլև մնացած շատ ժողովուրդներ[4]։ Կարճ ժամանակում Նոր Նախիջևանի հայ բնակչությունը ևս, հաղթահարելով բազում դժվարություններ և օգտվելով իշխանությունների ընձեռած հնարավորություններից, կարողացավ ստեղծել բարգավաճող տնտեսություն ու վերածել Նոր Նախիջևանը նաև մշակութային կենտրոնի, որն օրինակելի դարձավ ոչ միայն Ռուսաստանում, այլև արժանացավ ողջ հայ գաղթաշխարհի ուշադրությանն ու հոգատարությանը։ Այդ գաղթօջախի կազմավորումով, որը թեև պայմանավորված էր Ռուսաստանի տնտեսական ու քաղաքական շահերով, Ռուսաստանը զգալիորեն մեծացրեց նաև իր վարկն ու հեղինակությունը հայ բնակչության շրջանում[5]։ XVIII դարում այն թերևս միակ քաղաքն էր, որը բնակեցված էր զուտ հայազգի բնակչությամբ, չուներ այլազավան կամ այլէթնիկ զանգված, կառավարվում էր հայազգի անձերից կազմված քաղաքային վարչության կողմից։

1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ռուսական զորքերի կողմից գրավված տարածքներից հավաքագրված հայ բնակչության համար Նոր Նախիջևանի օրինակով որոշվեց ստեղծել հայկական քաղաք։ Նման որոշման ընդունման նախաձեռնությունը, սակայն, այս անգամ ծա-

---

[1] А. Юхт. Правовое положение астраханских армян в первой половине XVIII века.—*ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր (հաս. գիտ.)», 1960, 12:* В. А. Хачатурян. Административно-правовое положение астраханских армян во второй половине XVIII века,— *ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր (հաս. գիտ.)», 1963, 12. «Դատաստանագիրք Աստրախանի հայոց», աշխատասիրությամբ Ֆ. Գ. Պողոսյանի. Երևան, 1967։*

[2] Н. Б. Голикова. Очерки по истории городов России конца XVII—начала XVIII в., М., 1982, с. 179.

[3] А. И. Юхт. Армянская колония Астрахани в первой половине XVIII в.. Автореф. канд. дис., Ереван, 1959, с. 19; Н. Б. Голикова. Указ. соч., с. 179.

[4] *Վ. Բ. Բարխուդարյան. Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն. Երևան, 1967, էջ 26—27։*

[5] *Մեկ նախադասությամբ բնորոշելով Եկատերինա Երկրորդի վարած քաղաքականությունը հայերի նկատմամբ, 1827 թ. կազմված տեղեկագրերից մեկում այն ձևակերպված է հետևյալ կերպ.* «Великая Екатерина, дабы упрочить Азиатскую торговлю и для сего наиболее привлечь в малолюдныя южныя свои области армян, обладающих в Персии торговлею, пожаловала в 14 день ноября 1779 года Грамоту единоплеменникам их, вышедшим из Крыма» (АВПР, ф. СПб., Главн. арх., II—3, 1826—1829 гг., д. 4, л. 13).

գում էր ոչ թե ռուսական արքունիքից, այլ պատկանում էր հայ գործիչներին[6]։ Ռուսական արքունիքը սիրով հավանություն տալով նախաձեռնությանը, ամենայն հետևողականությամբ հետամուտ եղավ իրականություն դարձնելու այն[7]։ Այդ մասին են հուշում Հովսեփ Արղությանի 1789 թ. հունվարի 6-ին Աստրախանից գրած նամակի հետևյալ տողերը. «Զգիտեմ Քիլու և Իսմայէլի ես տիրեցին, թէ՝ ոչ։ Եթէ տիրեալ իցեն, մեզ վայել է փութով գալ և նոցա յօգնութիւն հասանել»։ Նույն օրը գրած մեկ այլ նամակում, որն ուղղված էր Հովհաննես Խոջամալյանին, Հովսեփ Արղությանը նշում է. «Օգուտ առնուլն և թէ գչոջակայսն նոցին տիրեալ են, թէ՝ ոչ։ Եւ թէ՝ զկամս խնամակալին գիտել, զի՞նչ դիտումն ունի վասն նոցա, մեր գալն և կամ մարդ ղրկելն անդ հարկավո՞ր է, թէ՝ ոչ։ Ծանուսցես մեզ փութով»[8]։ Եզրահանգման մեջ ավելի ենք համոզվում Հ. Արղությանի 1789 թ. հունվարի 16-ին Հովհաննես Լազարյանին գրած նամակից. «Պայծառափայլ օնիապին խոնարհութիւնս հայտնեմ՝ Աչաքով որ առին, եթէ տիրեալ իցեն Քիլուն և Իսմայէլին, հարկ է մեզ այդ ելանել անդր։ Այսմ պատասխանն ինձ գրել խնդրեմ»[9]։

Հովսեփ Արղությանը և ռուսահայ գաղթօջախի մյուս նշանավոր ներկայացուցիչները ոչ միայն կամակատարներ չէ, որ դառնում էին իշխանությունների մոտ, այլ փորձում էին օգտվել իշխանությունների շահագրգռվածությունից և նպաստավոր պայմաններ ստեղծել հայազգի բնակչության համար, տնտեսական ու իրավական արտոնություններ կորզել արքունիքից։ 1789 թ. հունվարի 23-ին Հովհաննես Լազարյանին գրած նամակում Հ. Արղությանը Աստրախանից հաղորդում էր. «Ռուսաց վաճառականքն աեղույս շատ լրբաբարոյ են ընդդէմ մեր ազգին։ Մեծամեծքն ի կողմն նոցա են, ուր գէշն է, անդ և արծուիքն։ Ապա մերքն՝ պարոն Մկրտումն, առավել՝ պարոն Աբրահամն, պակաս տեղ չթողին ասել նոցա՝ միաբանութեամբ հայոց և թաթարաց՝ վասն գլավայ ընտրմանն Պօլովի։ Վիչ դուբեռնաթին ես, որ սոցա ասաց, թէ դուք ոչ էք վէչնի պօշան և այլ բանք...»։ Վկայակոչված նամակում առաջին անգամ արձանագրվում է Հովսեփ Արղությանի մտադրությունը՝ «որ եթէ Հաշտարխանցւոցն և մանաւանդ թէ բոլոր հայոց ազգին միապէս ողորմութեան պրվէլէկով օրէնք և կացութիւն տայք համեմատ նախիջևանցւոց, սիրահարութեամբ դարձցեն բազումք յամենայն կողմանց և մեք տարածանելոց եմք զայս»[10]։ Նույն օրը իր այդ դիտավորությունը Հովսեփ Արղությանը գրում է նաև Մինաս Դիլանչյանին. «Նախիջևանցւոց պրվիլէկն ի հնգիկս Շամիրամ տղայն տպեալ և ի ներքոյ Նորին վասն ռուսաց շնորհակալութիւն գրեալ՝ եռախտագետ լինելով, ահա զնոյնն առաքեցի, որ եթէ պայծառափայլ քնեազն յայտր իջէ, ի դիմաց իմոց կարող էք մատուցանել, [illegible] ամենայն հայոց, որ եթէ սոցա (իմա՝ աստրախանցիներին—Գ. Զ.) ևս և ամենայն ազգին հայոց այնպիսի պրվէլէկ շնորհեսցեն, յամենայն կողմանց գալոց են աստ»[11]։

Միայն 1789 թ. նոյեմբերի 3-ին գեներալ-մայոր Վ. Ս. Պոպովի գրությամբ Հ. Արղությանը ծանուցվում է Գ. Ա. Պոտյոմկինի ցանկության մա-

---

[6] Դեռևս 1785 թ. նոյեմբերի 11-ի Գ. Ա. Պոտյոմկինին ուղղած մի գրությունից պարզվում է, որ ռուսական իշխանությունները պատրաստ էին Հյուսիսային Կովկասում համախմբված հայ բնակչությունից կազմավորել հայկական մեկ բնակավայր ևս (Ж. А. Ананян. Армянская колония Григориополь. Ереван. 1969, с. 28):

[7] М. Г. Нерсисян. Армянские волонтеры в русско-турецкой войне 1787—1791 годов.—«Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 3, էջ 108—110. Հմմտ. М. Г. Нерсисян. А. В. Суворов и русско-армянские отношения в 1770—1780-ых годах. Ереван. 1981, с. 37—41; Ж. А. Ананян. Указ. соч.

[8] ՄՄ, ձեռ. 2949, թ. 105բ։

[9] Նույն տեղում։

[10] ՄՄ, ձեռ. 2949, թ. 108ա—108բ։

[11] Նույն տեղում, թ. 109ա։

սին՝ հրավիրելու նրան գործող բանակ, որի զորակայանը այդ ժամանակ գտնվում էր Բենդերում։

Իշխան Գ. Ա. Պոտյոմկինի 1789 թվականի նոյեմբերի 7-ի կարգադրությամբ արդեն նվաճված տարածքների հայազգի բնակչության հովվությունը մտցվում է Հ. Արղության թեմի մեջ և հրամայվում «одну из состоящих здесь мечетей обратить в церковь для армянского исповедания»[12], իսկ 1790 թ. հունիսի 17-ին մայոր Ռեմարին տրված հրամանով հանձնարարվում է նախապատրաստական աշխատանքներ տանել հայերին Դուբոսարում հավաքելու և բնակեցնելու ուղղությամբ[13]։

Հ. Արղությունը ձեռնամուխ է լինում պատերազմական գործողություններից տուժած հայ բնակչությանը օգնություն կազմակերպելու գործին։ Նա տարբեր վայրեր ուղարկած շրջաբերականներով դիմում է մերձակա վայրերի (Բոտոշան, Ռոման, Սուչավ և այլն) հայ բնակչության օժանդակությանը՝ նկարագրելով այն վիճակը, որի մեջ հայտնվել էին նրանք պատերազմական գործողությունների ժամանակ. «...գիտութիւն լիցի հոգևոր որդւոց մերոց, զի ըստ աստուածային անքննելի դատաստանացն, ի բարձմանէ թագաւորութեան մերոյ մինչև ցայժմ տարաբախտ և ողորմելի ազգ մեր ոչ ուրէք գտանելով զհանգիստ և զմխիթարութիւն, իբրև զբեկեալ նաւ, աստ և անդ տարբերի և վարի դանդաղ մրրկաւ խռովութեան ծովու, այսինքն՝ ի պէսպէս յանութենէ իշխանութեան, վասն որոյ երբեմն պայծառանալ յաջողութեամբ և երբեմն՝ վտանգի յոգնակի ձախողութեամբ։ ...Արդ, մինչ զՔիլին առին և մեք գնացեալ զժողովուրդսն հանաք, տեսանելով զաղքատս նոցա, մորմոքէաք և ցաւեցաք, ապա այժմ մոռացաք զնոցա, տեսանելով զխղճութիւն և զանբախտութիւն Իսմայէլցւոցն... Ի դեկտեմբերի 11 ի լուսանալ առաւօտուն բազում արիւն հեղութեամբ առին զօրքն մեր զԻսմայէլ և ի հինգ ժամս որոյ ճարակ եղուն այնքան բազմութիւնն թուրքաց, մինչ ցերեսուն հազար, իսկ գերեցին ի նոցանէ ութն հազար, ինչքն նոցա աւար առին, իսկ ի յազգէ մերմէ անգիտութեամբ սպանեալք էին մինչ քառասուն անձինս և Լ(30) տղայք և աղջկունք գերեալք, սոյնպէս և ի մայրդաւանացն։ Յետ առման քաղաքին զբոլոր քրիստոնեայսն հանեալ էին ի քաղաքէն և չորս օր պահեալ ի բանակի զօրացն և ի մէջ չորից աւուրցն զբոլոր տունս մեր թալանեալ և զծածկեալս հանեալ, զամենայն հարստութիւն նոցա և զսուրբ եկեղեցին մերկացուցեալ ի բոլոր զարդուցն... Յետ չորից աւուրցն մերկացուցեալ զբոլոր ժողովուրդսն մեր, խնդրանօք և աշխատութեամբ մերազնեայ պօլկովնիկ Եկիմ Վասիլիչ Խաստատովին, անդէն դարձուցեալ են ի Յիսմայէլ, ժողովուրդքն եկեալ գտեալ են զտունս իւրեանց դատարկ և եկեղեցին՝ մերկ։ Լսելով մեր գնացաք անդ ...ի սոցանէ Լ(30) որբ տղայս առեալ բերի աստ ի Յեաշ, ես կերակրիմ և զգեցուցանեմ՝ առաքել զնոսա ուրեմն զպրոցին մերոյ ի Նախիջեան սուրբ Խաչ վանքն՝ լինել հիմն դպրոցի մերոյ։ Երրորդ՝ գերեաց ԴՃ(400) ղուռուշի հին շոր առեալ, մերկ անձանցն բաժանեցաք։ Չորրորդ՝ երեք հազար հոխայ ալիւր առեալ, բաժանեցի և բաւական խարջի ևս ետու, և մեր Կարապետ վարդապետն թողի՝ ըստ մեր կարեացն՝ ամենայնից տալ։ Ապա այսու ոչ լինի նոցա բաւական օգնութիւն...»[14]։

1791 թ. հունվարին Գ. Ա. Պոտյոմկինին ուղղած գրությամբ Հ. Արղությունը ներկայացնելով հայ բնակչության վիճակը ոչ միայն լրացուցիչ և անվերադարձ օգնություն է խնդրում, այլև առաջարկում է նրանց համար ստեղծվելիք քաղաքը անվանել Գրիգորիոպոլ՝ հայոց սուրբ Գրիգոր Լուսավորչի

12 «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», часть I. М., 1833, с. 44; Армяно-русские отношения в XVIII веке, 1760—1800 гг. Сборник документов, том IV, под. ред. М. Г. Нерсесяна, Ереван, 1990, с. 380—381.

13 Ж. Ананян. Указ. соч., с. 36—37.

14 ՄՄ, ձեռ. 2949, թ. 211բ—213ա, 1791 թ. փետրվարի 10, Յաշ

անունով[15]։ 1791 թ. սեպտեմբերին գրված զեկուցագրերից մեկում արձանագրված է, որ Մ. Ի. Կուտուզովը հրամայել էր Իզմայիլից Դուբոսար փոխադրած հայերին «поместить в Бендерах, приняв их в особое покровительство»[16].

1791 թ. ինչպես Նոր Նախիջևանի, այնպես էլ ռուսահայ գաղթօջախներից հնագույնը և խոշորը հանդիսացող Աստրախանի հայ համայնքի կարիքների մասին արքունիքից ակնկալվող արտոնությունների համար պատրաստվել էին խնդրագրեր ու նախագծեր։ Նույն թվականի հուլիսին Պետերբուրգից աստրախանահայերին գրած նամակում Հ. Արղությանը ծանուցում էր, թե «...զբոլոր խնդիրքն մեր քանիցս ի ձեռն դերազնիւ սիրելւոյն իմոյ հոգոյ և ձեր հասարակացդ բարերարի աղայ Յովհաննէսին (Լազարյան) մատուցի ընտրանօք, որոյ ոչ գոյր պատճառ ինչ արգելման, այլ այս միայն եղև այժմ պատճառ յամենալոյ, որ յանկարծ հաշտութիւն խօսեցան ամենայն թագաւորք ընդ թուրքաց, հարկադրեալ եղև պայծառափայլ քնեազն շուտով գնալ ի Յեաշ և զհաշտութեան դաշինն գնել ընդ վէզիրին, ուստի մեր բանն մնաց։ Մեզ հրամայեաց անդէն դառնալ ի յՅաշ և խոստացաւ միամտիլ, որ իբր յետ հաշտութեանն զամենայն խնդիր ազգի մերոյ կատարելոց է։ Ուստի գրեմ ձեզ առ այս՝ միամիտ լինիլ և փոքր ինչ ևս համբերել»[17]։

1791 թ. նոյեմբերի 20-ին Յաշից Հովհաննես Լազարյանին դրած Հովսեփ Արղությանի նամակից պարզվում է, որ Գ. Ա. Պոտյոմկինի անակնկալ մահից (1791 թ. հոկտեմբեր) հետո ռազմաճակատ ժամանած Ա. Ա. Բեզբորոդկոն սիրով է ընդունել Արղությանին «և յուսադրեաց, հրամայեց մեզ զամենայն խնդիր մեր պատրաստել յանուն թագուհոյն, որպէս թէ ինքն յանձն է առեալ կատարել զամենայն խնդիրս մեր։ Մեք աստ եղեալ տառապելոց զհարկաւոր խնդիրսն նախ պատրաստել ետուք, իսկ ինքն հրամայեաց Նախիջևանու և Հաշտարխանու խնդիրն ևս տալ, որ ի միասին առ թագուհին ուղևորեսցէ։ Ահա պատրաստ եմ մատուցանել և յետ այնորիկ զամենայնից կօպիէքն առ քեզ առաքեցից»[18]։ Շարունակության մեջ նշվում է, թե «Աստ եղեալ ժողովուրդսն ըստ մեծի մասին տարաք ի Դուպասար, մնացեալն ևս այսօր-վաղն անցուցանելոց են, որք են տունք էՃԺԴ (714) և անձինք չորս հազար»։ Այդ նամակից մեկ շաբաթ անց՝ նոյեմբերի 27-ին նա նամակներ է հղում Աստրախանի, Ղզլարի, Մոզդոկի և Սարաֆանի հայ համայնքներին և

[15] «План городу благоволите пожаловать теперь во славу имяни ангела Вашего и просветителя нашего Григория Великия Армении», տե՛ս Армяно-русские отношения..., т. IV, с. 386—387; Ж. Ананян. Указ. соч., с. 39. Ուսումնասիրողները հակասություն են տեսնում քաղաքի անվանման հարցում եղած վկայությունների մեջ՝ պայմանավորված Գ. Ա. Պոտյոմկինի և Լուսավորչի անունների նույնությամբ և Լուսավորչին որպես Գ. Պոտյոմկինի հովանավոր հրեշտակ ներկայացնելու ձևի առումով։ Հմմտ. նույն տեղում, էջ 42—43. 1792 թ. ապրիլի 16-ին Գրիգոր վարդապետին գրած նամակում Հովսեփ Արղությանը միանշանակ գրում է. «Առացաք ուքազ ի նորին կայսերական մեծութենէն... յանուն սրբոյն Գրիգորի Քաղաք շինել մերով օգնականութեամբ և անուանել զայն Գրիգորուպօլ և աղքատացն սերոց տալ գրաւականութիւն...» (ՄՄ, ԿԴ, թղթ. 6, վավ. 28, բնագիր, 1792 թ. ապրիլի 16)։ Այս վկայությանը, թվում է, հիմք չունենք չվստահելու։ Ավելին, 1792 թ. նոյեմբերի 17-ին աստրախանահայերին ուղղած շրջաբերականում Հ. Արղությանը նկարագրում է Գրիգորիոպոլի հիմնադրման արարողությունը. «և օծաք սրբալոյս միւռոնիւ զվեց քարինս. մինն՝ յանուն թագուհոյն, որում կնքաւոր էր մեր զուբեռնաթ Վասիլ Վասիլիչ Կախովսկին, զոր եդաք ի տեղի աւագ եկեղեցոյն։ Երկրորդն՝ յանուն Լուսաւորչին, որպէս պահապանի Քաղաքին, որոյ անունն կոչէ նոյն Քաղաքն, որում կնքաւոր էր ենարալ պօռուչիկ Տօլստովն, զոր եդաք ի միջակէտ քաղաքին, իսկ մնացեալ չորս քարինքն՝ յանուն չորից աւետարանչացն...» (ՄՄ, ձեռ. 2951, թ. 1ա—2բ)։

[16] М. Г. Нерсисян. Армянские волонтеры..., с. 110

[17] ՄՄ, ձեռ. 2949, թ. 239բ։

[18] Նույն տեղում, թ. 249բ։

առաջարկում տեղերից ևս խնդրագրեր կազմել այն պահանջներով ու բովանդակությամբ, որ ինքը՝ Հ. Արղությանը, արդեն ներկայացրել է բանակ ժամանած Բեզբորոդկոյին.

«1. Վասն նախիջևանցւոցն, որք պարտական են թագաւորին 24000 թուման՝ շնորհել դայն, և գնտին, որ փոքր է նոցա, ի մերձակայ տեղիցն ևս տալ նոցա բաւականութիւն՝ ի Նախիջևանու մինչ ի Թագանրոգ։

2. Հաշտարխանցւոցդ և զգլարցւոց, մոգղոկեցւոց և այլոց ամենայնից հայոց միասնակ պրվէլէք տալ, որք ամենեքեան լինիցին միօրինակ՝ հանդոյն Նախիջևանու՝ անխառն յամենայն աղգաց։

3. Վասն այս նոր ժողովրդեանս՝ Իսմայելու, Քիլու, Աղքիրմանու, Բենդերու և այլոց, զորս բերի և ի Դուպասար բնակեցուցի..., որ են յոթ հարիւր տուն և չորս հազար հողիք,— վասն սոցա քաղաքատեղ՝ յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, գնտին և այլ ամենայն բնակութիւն՝ հանդոյն Նախիջևանու։ Որոց ամենայնից յաղագս քնեազն զմեզ միամտեցուցեալ էր կատարել, այժմ պայծառ գրաֆն մեծաւ յօժարութեամբ յանձն էառ զբոլորն կատարել»։

1792 թ. փետրվարի 23-ին հետևում է Եկատերինա II-ի հրահանգը Եկատերինոսլավի նահանգապետ Վ. Վ. Կախովսկուն, ինչպես հայերի նկատմամբ վարելիք բաղաքականության ուղղվածության, այնպես էլ Գրիգորիոպոլ քաղաքի հիմնադրման մասին[19]։ Ակնարկելով այս հրահանգը, Հ. Արղությանը Գրիգոր վարդապետին 1792 թ. ապրիլի 16-ին գրած նամակում նշում է. «Տեղւոյս (իմա՝ Գրիգորիոպոլ) ժողովուրդքն առ հասարակ ցնծութեամբ կան, զի վասն ազատաց տուն շինեն, ձի և որպէս յառաջագոյն խնդրեալ եմք՝ իւրամանչիւր անձին 10 ռուպլի փող տան, որ ձի և արապայ առնուն և կառաւսրեն զտուն իւրեանց, այրի կանանց ծնած կով տան, պահել զինքեանս նովա։ Եկեղեցիք, առաջնորդարան, խանութք, քարվանսարայ, զայֆախանայ, հիւանդանոց, դպրատուն և փուռն. բոլորն թագաւորական արդեամբ շինեն և մեր քաղաքին շնորհեն։ ...Սուլխան դիւանն և Գորիչն գնացին ի Կըրմէնչուկ առողջութեամբ ...Յուսամ, որ մեր բանն այսուհետև յաջողի, թագուհին մեծ շնորհ ունի ի վերայ մեր։ Յետոյ գրեցից»[20]։

Հ. Արղությանը, իրոք, անմիջապես դիմում է գրաֆ Բեզբորոդկոյին՝ խոստացված միջնորդությունը ի կատար ածելու խնդրանքով[21], իսկ Նովոռոսիայի գեն.-նահանգապետ Պ. Ա. Զուբովին ուղղած նամակով առաջարկում «для народнаго правления необходимо нужно иметь переведенными священныя е. в. законы, как то: учреждение о губерниях, устав благочиния, дворянское и городское положении. То не благоугодно ли будет оную комиссию поручить е. высокобл. Ивану Лазаревичу, а он от себя уже будет просить Екима Лазаревича и Захара Ивановича господина Мирзаханова, а по переводе оных я прикажу напечатать в моей Нахичеванской типографии на российском и армянском языках»[22]։

Նույն թվականի նոյեմբերին Հովսեփ Արղությանը փորձում է օգտագործել պարգևատրման առիթով իր Պետերբուրգ ժամանելու բարեպատեհ առիթը և կազմակերպել ռուսահայ գաղթօջախների պատվիրակությունների համատեղ դիմում արքունիքին՝ բավարարում տալու միասնական և համանման արտոնություններ ստանալու պահանջներին[23]։ 1792 թ. նոյեմբերի 17-ին

---

19 Ուշագրավ այդ վավերագիրը հրատարակվել է նաև հայերեն։ Տե՛ս ՄՄ, ձեռ. 3802, թ. 65ա, Ռուսերեն բնագիրը տե՛ս Армяно-русские отношения, IV, с. 395.

20 ՄՄ, ԿԴ, թղթ. 6, վավ. 28, բնագիր։ Ուշագրավ է, որ նամակի վերջում որպես գրման վայր նշված է «ի Գրիգորուպոլ նոր քաղաք հայոց»։

21 АВПР, ф. СРА, оп. 100/III, 1774—1800, д. 462, л. 67, подлинник.

22 Армяно-русские отношения..., IV, с. 396.

23 ՄՄ, ձեռ. 2951, թ. 3ա։

Նախիջևանից Աստրախան՝ Մկրտում Գալստյանին ուղղած նամակում Հ. Արղությանը գրում է. «Նախիջևանցիքն ևս աղաչեն փութով գնալ և զերծանել բանն այս։ Երկու դժփութեամբ ևս ընտրեալ են ընդ իս տանիլ. մինն պարոն Յովհաննեսն է։ Սոցա բանն լինելոց է, որպէս և աղայ Յովհաննէսն գրէ. դժուարին ձեր բանն է... Պլատոն Ալեքսանդրիչ Զուպովն յոյս տայ, որ և գնալն իմ անդ, նա յանձն է առնելոց և կատարելոց զամենայն խնդիրս իմ։ Ի դեկտեմբերի 15 պարտիք այտի փօշտով ուղևորել»։ Մեկ այլ նամակ ևս Արղությանը գրում է Աստրախանի նահանգապետին և ուղարկում Մկրտում Գալստյանին, որ նա «քանի մի երևելի արամբք» խոսի նահանգապետի հետ՝ ճշտելու նրա գիրքորոշումը։ Դյուրացնելու համար նահանգապետի հետ բանակցությունները, Հ. Արղությանը ուղարկում է նաև Նախիջևանին տրված հրովարտակի պատճեն, Գրիգորիոպոլին տրվելիք «Պրվելեկի» խնդրագիրը, որ Կախովսկու համաձայնությամբ ուղարկվել էր թագուհուն, ու նաև աստրախանահայերի համար Հ. Արղությանի նախորդ խնդրագիրը Գ. Ա. Պոտյոմկինին, որ խոստացել էր ընդառաջել, իսկ այնուհետև գրաֆ Բեզբորոդկուն, որ այն տարել էր թագուհուն։ Այն «յայտնի է թագուհոյն և իմոյ գնալն մնայ»,— գրում է Հ. Արղությանը նույն նամակում։ Հ. Արղությանը կարծում էր, թե եթե Աստրախանի նահանգապետը ևս կամենա միավորել իր կամքը և գրել Զուբովին, գրաֆին և կամ Պոպովին, ապա «յոյժ հեշտութեամբ լինի բանի կատարումն»։ Աստրախանի նահանգապետին գրած նամակի բովանդակությունը այսպես է համառոտում նամակի հեղինակ Հ. Արղությանը. «Հասարակութիւնն մեր զխնդիրս իւրեանց, զոր ի ձեռն մեր լուսահոգի քնեազին էին մատուցեալ և նա յանձն էր առեալ կատարելն և այժմ ի ձեռս գրաֆին է, առաքեցի այդր, վասն վերահասութեան ձերոյ, խնդրեմ զհաճութիւն ձեր գրել, ուր պատկանի, որ ժողովուրդն միաւորեալ ընդ միմեանս՝ միով օրինօք ծառայեսցեն կայսերութեանս»։ Այնուհետև Հ. Արղությանը իր լավատեսությունը ավարտում է հետևյալ ձևով. «Այս իմ յետին գնալս է անդ (իմա՝ ՍՊբ), մեծամեծքն ամենեքեան՝ բարեկամ և աղայ Յովհաննէսն այժմ ի սրտէ հետևի, ոչ ունիմ երկբայութիւն չկատարելոյ, այլ եթէ այժմ չկատարի, յաւիտեան յոյս ոչ գոյ։ ...Աշխատանքն իմ թագուհին գիտէ յատկապէս, որ ոչ եթէ միայն վասն իմ ազգի երջանկութեանն, այլև իւր կայսերական մեծութեան թագաւորութեանն է շահաւէտութիւն»[24]։

1793 թ. հունվարի 9-ին Հ. Արղությանը Պետերբուրգում ընդունվում է կայսրուհու, հունվարի 16-ին՝ Պավել Պետրովիչ թագաժառանգի կողմից, իսկ հունվարի 18-ին, այն է՝ գրառումը կատարելու օրը, գնում է «առ ծայրագոյն իշխանսն»[25]։

Մեկ ամիս անց, 1793 թ. փետրվարի 17-ին ու 21-ին, Պետերբուրգից Հ. Արղությանը Աստրախան և Ղզլար գրած նամակներով արդեն հուսադրում էր, թե «...ողորմած թագուհին գրիգորիուպօլցւոց խնդիրն ընկալեալ հրամայեալ է պրվելէկն գրել նման նախիջևանցւոց։ Յետ այսորիկ Հաշտարխանու և կողմանցդ խնդիրքն եմ տալոց. յուսամ լինիլ ուրախութիւն մեծ վերջն»[26]։

Ռուսական արքունիքը, սակայն, այս անգամ ևս չբավարարեց ոչ միայն աստրախանցիների, այլև նորնախիջևանցիների խնդրագրերը և թողեց անպատասխան։ Նոր Նախիջևանի պատվիրակները, որոնք Հ. Արղությանի առաջարկով ժամանել էին Պետերբուրգ, շարունակում էին մնալ և գտնվում էին այնտեղ դեռևս 1793 թ. աշնանը ևս։ Հ. Արղությանը, որ արդեն գնացել էր Գրիգորիոպոլ[27], ստիպված է լինում այնտեղից նույն թվականի սեպտեմբերի

24 Նույն տեղում, թ. 6ա—6բ։

25 Նույն տեղում, թ. 9բ։

26 Նույն տեղում, թ. 13ա։

27 Գրիգորիոպոլցիների ստացած կարգավիճակի մասին է վկայում ուշագրավ մի վավերագիր, որ հայտնաբերել է Ժ. Անանյանը։ Պարզվում է, որ Հովսեփ Արղությանի Գրիգորիոպոլում գտնվելու ընթացքում կնքվել է մի պայմանագիր Գրիգորիոպոլի համայնքի դեկավար

12-ին կրկին դիմել Պ. Ա. Զուբովի միջնորդությանը, հիշեցնելով նորնախիջևանցիների կրած կորուստներն ու վնասները Կրիմից տեղափոխվելու ժամանակ և նրանց վրա դոյացած պետական պարտքերը դիջելու անհրաժեշտությունը, որոնք դոյացել են «за хлеб, семена и за скот, из которых весьма мало пользовались, 178 тысяч рублей», խնդրում է զեկուցել կայսրուհուն, չեղյալ հայտարարելու այդ պարտքը, «и тем заставите обоего пола до 30 тысяч душ благодарных за вас бога молить...»[28]։ Նորնախիջևանցիների պահանջներին համանման պահանջներ արքունիքին առաջադրել էին նաև Կրիմից դուրս բերված հույն ազգաբնակչությունը և Ռուսաստանում բնակություն հաստատած մի շարք այլ ժողովուրդներ ևս։ Հարցի քննարկումը այնուամենայնիվ կայացավ և սենատին ուղղված կայսրուհու հրամանագրի տեսքով հրապարակվեց 1794 թ. օգոստոսի 28-ին[29]։ Հրամանագրով չեղյալ էր համարվում ինչպես Նոր Նախիջևանի բնակչության 178 094 ռուբլու, այլև հույների ու վրացիների 412 362 ռ. պարտքը։ Նույն հրամանագրով կարգադրվում էր Նոր հողահատվածներ հատկացնել Նոր Նախիջևանի բնակչությանը որպես փոխհատուցում Դոնի զորամասին անցած նրաց հողամասերի դիմաց և առաջնորդվել 1793 թ. մայիսի 27-ի իր հրամանագրով։ Հրամանագրի առանձին կետով խոստում էր տրվում առանձին անդրադառնալ Գրիգորիոպոլի բնակչությանը արտոնություններ շնորհելու խնդրին։ Սվ իրոք, 1794 թ. հոկտեմբերի 12-ին հրապարակվում է Եկատերինա II-ի հրամանագիրը ուղղված Պ. Ա. Զուբովին, որտեղ թվարկվում են այն առանձնաշնորհումները, որոնք, ըստ նրա զեկուցագրի, տրվում են Գրիգորիոպոլի հայ բնակչությանը[30]։

Այս առանձնաշնորհումները, սակայն, կրում էին մասնավոր բնույթ, արվում էին առանձին գաղթօջախների, բայց չէին լուծում Ռուսաստանի հայազգի բնակչությանը միատեսակ կարգավիճակի բերելու հայ գործիչների մտադրությունը։ Այդ է պատճառը, որ Պ. Ա. Զուբովին ուղղված իր նամակում Հ. Արղությանը 1794 թ. նոյեմբերի 28-ին իր ուրախությունն էր հայտնում Գրիգորիոպոլի ստացած առանձնաշնորհումների համար և ցանկություն հայտնում ներկա լինելու Գրիգորիոպոլի համայնքում թագուհու հրամանագրի հրապարակման արարողությանը[31], սակայն չէր վարանում գրելու, թե «Пренемлю смелость поручить в милостивое ваше покровительство и астраханских армян, которых только одних и в Таврии обитающих

Պողոս Խումանյանի և հայ համայնքի ստացած տարածքում եղած կաղակների ներկայացուցիչ Պետրո Սոլովյովի միջև (1793 թ. հոկտեմբերի 13, Դուրոսար), որով կաղակները խնդրում են թույլատրել իրենց մնալու նախկին բնակավայր Ջերֆիում՝ պայմանով, որ 1. հողային տիրույթներից օգտվելու համար նրանք կվճարեն որոշակի գումար Գրիգորիոպոլի համայնքին, 2. կենթարկվեն Գրիգորիոպոլի դատարանի իրավասությանն ու որոշումներին և 3. կկատարեն որոշակի պարհակներ համայնքի համար (տե՛ս Ж. А. Ананян. К вопросу о русско-украинском населении «Очаковской» области и договор украинцев с армянами в 1793 г.—Исторические связи и дружба украинского и армянского народов, выпуск III, Ереван, 1971, с. 276—281).

28 Երևսուն հազար շունչը առաջին հայացքից տրամաբանական էր ենթադրել որպես միայն Նոր Նախիջևանի բնակչության քանակ, սակայն այդ թիվը իրականում նշանակում է Ռուսաստանի հայ բնակչության ընդհանուր քանակը (Армяно-русские отношения..., IV, с. 399), և այդ իր հերթին մատնացուցում է, որ մեկ անգամ ևս Հ. Արղությանի կողմից շեշտվում է, Ռուսաստանի բոլոր հայ գաղթավայրերի բնակչության շահերի միասնությունը և այն ներկայացվում որպես մեկ ամբողջություն։

29 ПСЗРИ, том XXIII, с. 552—553. Армяно-русские отношения..., IV, с. 404—405.

30 Собрание актов..., I, с. 190—192. Армяно-русские отношения..., IV, с. 405—406.

31 Այդ ժամանակ նա գտնվում էր Աստրախանում։

прозьбы остаются без решения»[32]. Այնուհետև ծանուցում է, թե ինքը արդեն խոստացել է աստրախանահայերին առաջիկայում ներկայացնել նրանց առաջարկները, ուստի և այդ խնդրագրերը այժմ պատրաստվում են[33]։

Հաջորդ երկու տարիներին ես չի թուլանում առանձնաշնորհումների ստացման համար բանակցությունների վարումը[34], չնայած այն հանգամանքին, որ 1795—1796 թթ. հայ գործիչների ուշադրությունը սևեռված էր հիմնականում Այսրկովկասում տեղի ունեցող ռազմաքաղաքական իրադարձություններին[35] մեկ կողմից և մյուս կողմից այն անհուսության, որը գալիս էր արքունիքի որոշ գործիչների ոչ բարեհաճ վերաբերմունքից Աստրախանի հայ վաճառականության նկատմամբ։ Վերջինս պայմանավորված էր Աստրախանում տեղի հայ և ռուս վաճառականության միջև ընթացող սուր մրցակցությամբ։

1796 թ. հունիսի 20-ին Աստրախանից Թագուհուն ուղղած նամակում Հովսեփ Արղությանը շնորհակալ լինելով 1794 թ. հոկտեմբերի 12-ին Գրիգորիոպոլի մասին օրենքի ստորագրման համար, միաժամանակ հայտնում է, որ հայ բնակչությունը խնդրում է Նոր Նախիջևանին տրված արտոնությունները շնորհել նաև Գրիգորիոպոլին՝ առ այդ բացի հղված երկու պատվիրակներից Պետերբուրգ ուղարկելով նաև փոխգնդապետ, Արարատյան գնդապետ Ստեփան Դավթյանին[36]։

1796 թ. նոյեմբերի 6-ին Եկատերինա II-ի մահից հետո գահ բարձրացած Պավել I-ը չհապաղեց դրսևորել իր անհամաձայնությունը ու վերանայել դիրքորոշումը երկրի ներքին ու արտաքին նախորդ քաղաքականության մի շարք հարցերում, այդ թվում նաև Պարսկաստանի դեմ Այսրկովկասում ընթացող պատերազմական գործողությունների նկատմամբ։

Պավել I-ի գահակալումը նոր հույսեր արթնացրեց նաև աստրախանահայերի մոտ՝ լուծում տալու առանձնաշնորհումների խնդրին։ 1797 թ. հունվար ամսին արդեն Աստրախանի հայ հասարակության ներկայացուցիչներ Մաթեոս Խալաֆովի և Գասպար Մուրադովի ստորագրությամբ Ա. Բ. Կուրակինին ներկայացվում է գրավոր նոր դիմում, որտեղ բացատրվում է այն վիճակի անհեթեթությունը, որի մեջ ակամա հայտնվել է Աստրախանի հայ վաճառականության մեկ մասը[37]։ Եվ իրոք, վերջին այս դիմումի պատաս-

32 Армяно-русские отношения..., IV, с. 408.

33 Նույն տեղում։

34 Հայտնի է միայն, որ 1796 թ. մայիսի 8-ին արդեն պատրաստի խնդրագիրը ներկայացվել էր արքունիք՝ Պ. Ա. Զուբովին, սակայն այն ընթացք չէր ստացել։

35 «Խոսք ասացեալ ի Յովսէփ պսակազգեաց սրբազան արքեպիսկոպոսէ Հիւսիսային կողմունս եղեալ ամենայն ազգիս Հայոց ի 1796 թուոյ ապրիլի 5 ի Ղզլար...», Աստրախան, 1796. Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ, 1512—1800, Երևան, 1963, էջ 219—220։ Ն. Ա. Ոսկանյան, Ք. Ա. Կորկոտյան, Ա. Մ. Սավալյան. Հայ գիրքը 1512—1800 թվականներին. Երևան, 1988, էջ 727։

36 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 52, ցուցակ 1, գործ 12, թ. 4—5։

37 Армяно-русские отношения... IV, с. 445—447. Հացեատերը ճշտված է փաստաթղթով։ Տե՛ս նույն տեղում, էջ 551, ծան. 129, Աստրախանում գտնվող Բաղեոս վարդապետին ուղղած նամակում Հ. Արղությանը 1798 թ. հունիսի 27-ի նամակում գրում է, թե «Յայսմ ամի եթե ես ոչ հանդիպէի աստ (իմա՝ ՍՊբ), կեցութիւն ժողովրդեանն իմոյ ի յետին թէլէ կախեալ կայր, որպէս յիմար նախիջեանցւոցն ոմանց խելագարաց, զի գնոաւ կամենեսեան ահա առնեն որպէս գսեպհական հայրենեաց բնակիչսն (իմա՝ ռուսներին—Գ. Ջ.) և զգիզորայս նոցա բաժանեալ ի քաղաքէն առնեն զմուժիկս՝ լինիլ ենթարկեալ ամենայն ծառայութեանց, զորս թագաւորական մուժիկին պատկանի։ Այժմ առ հասարակ ազատիր իւրեանց դիմեալ են առ մեզ աղաչական գրով... ահա այց առնեմ ազատել զնոսա ի նոր ծանրութեանց ժառանգել անգէն գրաբութիւնսն, զորս ունէին պրիվիլէկաւն նոցա առեցեալվքն և զոյ յոյս տերամբ, որ ողորմած կայսրն մեր շնորհեսցէ նոցա զխնդրելին, միջնորդութեամբ բարերարին մերոյ քնեազ Կուրակինին (ՄՄ, ձեռ. 2951, թ. 185ա—բ)։

խանը իրեն երկար սպասեցնել չտվեց. նույն թվականի փետրվարի 26-ին (մարտի 1-ին) հետևեց Պավել I-ի հրովարտակը, որով բավարարում էրն ստանում այն հինգ հիմնական պահանջները, որոնք բարձրացվել էին աստրախանահայերի հունվարյան նամակում[38]։

Շուտով, 1798 թ. օգոստոսի 4-ին հրապարակվում է Պավել I-ի մեկ հրահանգը ևս՝ ուղղված Սենատին, որտեղ կարգադրվում է հողեր հատկացնել 1797 թ. ռուսական զորքերի հետ Դերբենտից ժամանած հայ բնակչությանը[39]։

1798 թ. սեպտեմբերի 13-ին Հովսեփ Արղությանի հայերեն ստորագրությամբ արքունիք է ներկայացվում ավելի համապարփակ մի ծրագիր՝ «Записка о нуждах всех армянских обществ, выехавших и имеющих впредь выезжать в Россию» վերնագրով[40]։ Այս գրության հետ միասին ներկայացվել է նաև տեղեկանք, թե ինչպես են իրականացվել Եկատերինայի 1794 թ. հոկտեմբերի 12-ին հրովարտակի պահանջները Գրիգորիոպոլում[41] և ցույց է տրվում, որ անցած չորս տարիների ընթացքում կատարվել է նախատեսված ծրագրի միայն փոքր մասը, ուստի այդ բացասաբար է անդրադարձել հայ բնակչության տնտեսական վիճակի վրա և առաջացրել բնակչության արդարացի դժգոհությունը։ Նախորդ գրությունից մեկ ամիս չանցած, 1798 թ. հոկտեմբերի 11-ին Հ. Արղությանը կրկին գրությամբ դիմում է Պ. Վ. Լոպուխինին՝ պահանջելով անհապաղ իրականացնել իր նախորդ գրության գեթ նախիջևանցիներին[42] ու գրիգորիոպոլցիներին վերաբերող մասերը, եթե իր նախորդ պահանջների ամբողջական իրականացումը իշխանություններին առժամանակ անհնար է թվում[43]։ Հարցն այն էր, որ ի տարբերություն Նոր Նախիջևանի ու Գրիգորիոպոլի, Աստրախանի հայ վաճառականությունը գործում էր ռուս և այլ վաճառականության անմիջական հարևանությամբ և նրանց շահերը հաճախ հակադրվում էին ծավալվող մրցակցության պայմաններում։ Կենտրոնական իշխանությանը մնում էր ճկուն վերաբերմունքի դրսևորումով մեկ կողմից մեղմել Աստրախանի ռուս վաճառականության զայրույթը, և մյուս կողմից շարունակել հայ վաճառականությանը հովանավորելու իր քաղաքականությունը՝ նրանց ռուս-պարսկական ու ռուս-արևելյան առևտրի ոլորտում պահելու նպատակով, որ թելադրված էր պետության ընդհանուր տնտեսական շահերով, քանի որ ռուս վաճառականությունը չէր կարող փոխարինել նրանց նշված բնագավառում։ Հ. Արղությանը դժգոհում էր արքունիքից, որ հակառակ բարձրագույն կարգադրությունների, որով արտոնություններ էին սահմանվում աստրախանահայերի օգտին «не взирая на оное повеление, угнетается сие общество от тамошняго начальства, как постоем в домах их, хотя и готовы они нанимать для сего особливые

---

[38] Армяно-русские отношения..., IV, с. 447—448.

[39] ПСЗРИ, XXV, с. 331. Армяно-русские отношения..., IV, с. 478.

[40] ЦГИА, ф. 1374, оп. 2, д. 1815.

[41] Армяно-русские отношения..., IV, с. 478—481.

[42] Հովսեփ Արղությանը Նախիջևան հղած իր նամակներից մեկում այսպես է ներկայացնում իրադրությունը դեռևս 1798 թ. մարտի 18-ին. «Թագաւորի և քնեազ Կուրակինի դիրն մատուցաք քնեազին, ընկալաւ բաւականութեամբ և յոյս ետ տալ կատարումն, Քնեազն ինձ և աղայ Յովհաննեսին հրամայեաց՝ ինչ հայք կան ի Ռուսս և որպիսի կացութեան՝ տալ իւրն, զոր ետուք և տանի քնեազն նորող էքսպետիցիին և կամին ամենեքեան մի օրենի լինիցին, զի այժմ ղզլարցիք և դարբանդցիք ես պրվէլէկ խնդրեն։ Մեք վասն Նախիջևանցւոց այսքան միայն գրեցաք, թէ հաստատեալ զպրվելէկն և զգետինն, որ յառաջ և յետոյ տուեալ ենք զքաղաքին, այսպէս ծանուցիք զլավային և դատաւորացն, որ այսմ ամի կատարումն լինելոց է աստուծով։ Զօրն մինչև երեսուն տարի ազատ արարին յամենայն հարկաց, մաքսն լինելոց է յօրն ներսն տանօղն և դուրս բերօղն տալ, ներսն՝ ոչ ինչ» (ՄՄ, ձեռ. 2951, թ. 164բ—165ա)։

[43] Армяно-русские отношения..., IV, с. 481.

дворы, так и взиманием с них внутренних пошлин»[44]. Նմանատիպ դժգոհություն է արտահայտվում նաև Ղզլարի հայազգի բնակչության նկատմամբ վերաբերմունքի համար, որոնք օժանդակություն գտնելու փոխարեն ժամանակ առ ժամանակ ծանրաբեռնվում են ներքին տարբեր հարկերով, իսկ սահմանամերձ լինելու պատճառով, անընդհատ զբաղմունքների են ենթակվում դրսից։

Առավել ուշագրավ են ղրիմահայոց պահանջները, որոնք խմբավորելով ներկայացնում է Հ. Արղությանը։ Ըստ 1798 թ. սեպտեմբերի 13-ին Հ. Արղությանի ներկայացրած խնդրագրի, Տավրիայում բնակվող հայերը միանշանակ պահանջում են նախիջևանցիների ու գրիգորիոպոլցիների օրինակով արտոնությունների շնորհում և բացի այդ. 1. Թեոդոսիա կամ Կաֆա քաղաքում, որ 465 տարի առաջ, դեռևս ջենովացիների ժամանակից բնակեցված էր հայերով, համարվում էր հայկական քաղաք, որի վկայությունն են մինչև վերջերս տեղի ունեցած քաղաքի կործանումն ու ավերումը դեռևս կանգուն 24 եկեղեցիներն ու երկու հայկական վանքերը, որոնցից երկուսը դեռևս կան ու այնտեղ ժամերգություն է կատարվում, առանձացնել հայերի համար թաղամաս, որտեղ նրանք բնակվում էին նախկինում և կարող են անարգել բնակվել ապագայում։ Հատուկ ընդգծվում է, որ քաղաքի արտաքին պարիսպը ևս կառուցված է հայերի կողմից՝ թաթարների հարձակումներից պաշտպանվելու համար, որի մասին են վկայում պարսպի մեջ եղած հայերեն արձանագրությունները, որոնց մի մասը բերվել է Ցարսկոյե սելո[45]։ Ավելին, քաղաքի վերջին ավերման ժամանակ բնակիչների մեկ մասը 1778 թ. տեղափոխվել է Ռուսաստան և հիմնադրել Նոր Նախիջևանը, իսկ մյուս մասը՝ անցել Կարասուբազար։ 2. Հին Ղրիմ փոքրիկ քաղաքը ևս, որ առանձին հայկական քաղաք էր, և որի վկայություններն են այնտեղ եղած 7 հայկական կանգուն եկեղեցիները, հանձնվի հայերին՝ բնակության համար։ 3. Հին Ղրիմ քաղաքի մոտ եղած Ս. Գևորգ վանքին հատկացվի նախկինում ունեցած հողային տիրույթների գեթ մի մասը և հանձնվի հայոց թեմին՝ դնելով այն Հովսեփ Արղությանի իրավասության ներքո[46]։

1798 թ. դեկտեմբերի 10-ին Պ. Վ. Լոպուխինին ուղղած պատասխան գրության մեջ Աստրախանի նահանգապետ Ի. Զախարովը հաղորդում է, թե ստացած լինելով կայսեր հաճությամբ Պետական տնտեսության, արտասահմանյան և գյուղական տնտեսության հովանավորչական հանձնաժողովի հանձնարարությունը, ինքը ուսումնասիրել ու ըստ տրված հարցերի կազմել է Աստրախանում հայ բնակչության վիճակի մասին տեղեկանք, որը և ներկայացվում է արքունիք՝ Սենատի պետական տնտեսության հանձնաժողովին։ Այս փաստաթուղթը կազմված է առավել իրազեկ անձնավորությունների ու պաշտոնյաների կողմից և նրանում ցայտուն դրսևորում է ստացել ռուսական իշխանությունների ու վաճառականության չափավոր թևի տեսակետը, ուստի այն արժանի է համեմատաբար ավելի մանրամասն ներկայացման։ Ուշագրավ է, որ Ի. Զախարովը ևս, ինչպես բոլոր նախորդ ու հաջորդ ռուս ուսումնասիրողները, հայերի մասին տեղեկանքը սկսում է Ալեքսեյ Միխայլովիչ ցարի ժամանակ հայերին տրված առանձնաշնորհումների թվարկմամբ և ավելացնում, թե հայերը, սակայն, չպահպանեցին պայմանագրի միակ պահանջը՝ մետաքսի առևտուր չկատարել Ռուսաստանի հարևան պետությունների տարածքով, որի պատճառով էլ 1719 թ. զրկվեցին իրենց տրված առանձնաշնորհումներից[47]։ Արդեն 1723 թ. Աստրախանի բնակիչները բողոքում էին,

---

44 ЦГИА. ф. 1374, д. 1815. л. 19—22.

45 Այդ մասին հանդամանորեն տե՛ս Վ. Ա. Միրաքելյան. Ղրիմահայոց պատմություն. Երևան, 1989, էջ 191—192, 195—196։

46 Նույն. Վ. Միրաքելյան. նշվ. աշխ., էջ 280—281։

47 Հետաքրքիր է, որ ռուս ուսումնասիրող Օ. Պ. Մարկովան ևս նույն կերպ է բացատրում առանձնաշնորհումների վերացման հարցը. տե՛ս О. П. Маркова. Россия, Закавказье и международные отношения в XVIII веке. М., 1965.

որ հայերը, ունենալով շատ ազատություններ և արտոնություններ, չվճարելով հարկեր և ոչ էլ մասնակցելով քաղաքացիական պարտավորությունների կատարմանը, ռուսահպատակներին մեծապես վնասում են, ուստի և խնդրում էին կամ արգելել նրանց գործունեությունը և կամ նրանց համար ևս պարտադիր դարձնել քաղաքացիական պարտավորությունների կատարումը։ Թեև քաղաքային մագիստրատը պաշտպանում էր աստրախանցիների պահանջները, սակայն Կառավարող սենատի 1723 թ. սեպտեմբերի 23-ի հրամանով հայերին թույլատրվեց մնալ նախկին կարգավիճակում։ 1725 և 1727 թթ. թեև Կոմմերց-կոլեգիայի և ապա Բարձրագույն Գաղտնի խորհրդի կողմից սահմանվել են սահմանափակումներ, սակայն դրանք ևս էական դեր չեն ունեցել, քանզի Աստրախանի ռուս վաճառականությունը կրկին բողոքում էր և կրկնում նախկին պահանջները։ 1737 թ. Կառավարող սենատի որոշմամբ Աստրախանի հայ բնակչությունը պարտավոր էր ընդունել ռուսահպատակություն և գրանցվել ռուս վաճառականության մեջ։ Չգրանցվածներին արգելվում էր զբաղվել մանրածախ առևտրով, իսկ նրանց խանութներն ու գործարանները պետք է վաճառվեին երեք ամսվա ընթացքում, ժամկետին չվաճառվածները պետք է բռնագրավվեին և տրվեին գրանցված հայերին։ Չգրանցված վաճառականները կարող էին վաճառել միայն իրենց ներկրած ապրանքները՝ մեծածախ կերպով։ Այս կանոնակարգումը տևեց սակայն մինչև 1744 թվականը, երբ Կառավարող սենատը փետրվարի 29-ի գաղտնի հրահանգով թույլատրում էր «ընդունել հայերին՝ ժամանակավոր հպատակությամբ բնակվելու Աստրախանում, հարկերի փոխարեն նրանցից գանձել ըստ մագիստրատի հայեցողության (ի՞նչ և ինչքա՞ն՝ չի ասվում). Ռուսաստանում բնակվել ցանկացողներին թույլատրել գնալ. դատավարությունը կատարել ըստ իրենց օրենքների և սովորությունների, դավանանքի ազատություն, նրանց ազատել բոլոր տեսակի ծառայություններից ու պոստոյից (օթևանի պարտավորությունից) և դրանց փոխարեն նրանցից գանձել դրամով, և, ի վերջո, նրանց տրամադրել տարածքներ բնակարանների համար և թույլատրել կառուցելու ֆաբրիկաներ և մանուֆակտուրաներ»։

1746 թ. սեպտեմբերի 17-ին Կառավարող սենատը կրկնեց իր հրահանգը հետևյալ արտահայտություններով. «Աստրախանում բնակվող հայերին ու նաև որոնք ապագայում կժամանեն և անդամ նրանց, ովքեր արդեն եղվել են մշտական հպատակության, առանց նրանց կամքի չգրանցել վաճառականության մեջ, ազատել մագիստրատի ենթակայությունից, վաճառականական բոլոր հարկերից ու ծառայություններից. թույլատրել ապրելու առանձին համայնքներով (սլոբոդա), դրանցել որպես Աստրախանի մեշչաններ (քաղքենիներ), թույլատրել լինելու նահանգային դրասենյակի իրավասության ներքո, առևտրով զբաղվել ըստ նախկինի, քաղաքային ծառայությունների ու հարկերի փոխարեն նրանցից գանձել որոշակի գումար՝ առևտրի և զբաղմունքների համար՝ հանձնարարելով Աստրախանի նահանգապետին զեկուցելու այդ մասին Սենատին իր կարծիքը։ Առևտրով ու արհեստներով չզբաղվող, այլևայլ աշխատանքով ու ձեռագործությամբ սնվողներին և չունեոր մարդկանց չհարկել, մանրածախ վաճառքով, խանութներով ու գործարաններով թույլատրել օգտվելու ըստ նախկինի. դատավարությունն ու դատաստանը միմյանց միջև թողնել ըստ նախկինի և հիմնել ռաահաուդ, ազատել քաղաքացիական ծառայություններից, Ռուսաստանից հեռանալ ցանկացողներին թույլատրել՝ վերցնելով նրանցից կապիտալի տասներորդ մասը, հավաստվում է նրանց հավատի ազատ դավանելը ու բռնի չմկրտելը, օթևանի պարտավորությունից նրանց տների ազատելը, որտեղ նրանք իրենք ապրում են, այլ օթևանի համար գանձել դրամով, որով և վարձակալել բնակարաններ օթևանի համար, իսկ բնակարանների պակասի դեպքում՝ կառուցել նոր զորանոցներ, բնակեցնել նրանց ռուսներից անջատ թաղերով, արհեստավորներին ազատել ծառայություններից ու քաղաքացիական հարկերից՝ փոխարենը հարկել դրամով՝

ըստ արհեստի տեսակների ու նաև նրանց ապրանքները՝ մանրածախ վաճառքի դեպքում[48]։

Թվարկելով այս արտոնությունները, նահանգապետ Ի. Զախարովը փորձում է վեր հանել այն հիմքերը, որոնք անհավասար իրավիճակի մեջ էին գնում ռուս վաճառականությանը և բարատրել նրանց վրդովմունքի արդարացի լինելը։ Միաժամանակ երևան է գալիս, ըստ Ի. Զախարովի, այն «անարդար» հովանավորչությունը, որ հայերը, ձեռք բերելով 1740-ական թթ., շարունակում են պահանջել նաև դարավերջին։ Շարունակելով ներկայացնել Աստրախանում հայերի իրավական-տնտեսական կարգավիճակի փոփոխությունները, ղեկուղարի հեղինակը կանգ է առնում Կառավարող սենատի վերոհիշյալ հրահանգի կատարման ուղղությամբ Աստրախանի նահանգային գրասենյակի 1748 թ. մայիսի 11-ի որոշման վրա. Աստրախանում ռուսահպատակության մեջ գտնվող հայերին (որոնք այն ժամանակ 646 մարդ և 209 տուն էին) հարկ նշանակել տարեկան 1000 ռուբլի, որից 739 ռուբլին պետք է հատկացվեր հոգուտ և ի օժանդակություն ռուս վաճառականության, իսկ մնացածը՝ պետք է ծախսվեր քաղաքում կամուրջների շինարարության համար։ Ըստ քաղաքում հայերի տների համամասնության թույլատրվում էր կառուցել զորանոցներ և նրանց պահպանման համար որոշվում էր տարեկան 600 ռուբլի։ Այսպիսով, ռուսահպատակություն ընդունածների համար գործում էր 1746 թ. հրահանգը, իսկ օտարահպատակներին, որոնք ապրում են կամ հետագայում կգան Աստրախան,

Ա. արգելվում էր ապրանքները վաճառել մանրածախ ձևով

Բ. բերված ապրանքները թույլատրվում էր վաճառել միայն մեծածախ՝ իջևանատներում, ըստ մաքսային կանոնադրության

Գ. արգելվում էր ունենալ իրենց տները, խանութները, գործարանները, ապրել իջևանատներից դուրս կամ ամուսնանալ տեղում։

Թվարկելով վերոհիշյալ սահմանափակումները, Աստրախանի նահանգապետը, սակայն, ավելացնում է, որ թեև սկզբնական շրջանում այս խստությունների շնորհիվ հայերի մի մասը ընդունում էր ռուսահպատակություն, բայց հետո սկսեցին շրջանցել օրենքները և չպահպանել սահմանված կարգը։ Համարվելով քաղքենիական դաս և Աստրախանի բնակիչներ, նրանք զբաղվում էին առևտրով և միանգամ աղատված լինելով պարսից լծից, չէին ցանկանում վերադառնալ Պարսկաստան ու կարելի է համոզված ասել, թե երբեք էլ չեն վերադառնա։ Ուստի, ըստ Ի. Զախարովի, զարմանալի չէ, որ հայերի քանակը գնալով ավելանում էր, Աստրախանում ստեղծում էին խոշոր թաղամասեր, իսկ Ղզլարում դարձան քաղաքի որոշ միակ բնակիչները, որովհետև օգտվելով ամեն ինչից և չվճարելով գրեթե ոչինչ, կազմեցին այսպես ասած Status in Statu. Շարունակելով իր զեկուցագիրը, հայորդ կետով ներկայացնում է Կառավարող սենատի 1773 թ. հոկտեմբերի 13-ի հրահանգը, որով կարգադրվում էր, թե նկատելով այն հանգամանքից, որ 1716 թ. հետո ընկած ժամանակահատվածում Աստրախանում հայերի քանակը բազմապատկվել է, ուստի որպեսզի նրանց բնակարանները ազատվեն օթևանի պարտավորությունից, ապա անհրաժեշտ է, որ նրանք կառուցեն լրացուցիչ զորանոցներ՝ իրենց քանակին համապատասխան և վճարեն սահմանված վարձ։ Այս հրահանգը ևս, սակայն, ըստ Ի. Զախարովի, չգործադրվեց, որովհետև շուտով պաշտոնանկ եղավ Աստրախանի նահանգապետ Կրիչևնիկովը, իսկ հայերը շարունակեցին վճարել 1746 թ. սահմանված 600 ռուբլի գումարը, իսկ նոր զորանոցներ ոչ միայն չկառուցվեցին, այլև նախկինում կառուցված և անտերության մատնված 21 զորանոցները հնացան և ավերվեցին։ Հայերը համաձայնեցին իրենց բնակարաններում տեղավորել զինվորներին, որովհետև այդ նրանց համար մեծ անհարմարություն չէր, բանդի տեղի կա-

[48] Армяно-русские отношения..., IV, с. 487.

լոպորի անձնակազմի մեծ մասը ուներ իր սեփական բնակարանները Աստրախանում և 1791 թ. Կովկասի տեղապահական վարչության որոշումով ազատվեցին նաև վճարելիք հարկից։ Ռուս վաճառականության օժանդակության համար դանձվող 739 ռուբլի գումարը, ըստ Ասիական դատարանի վրատաշնչման, թեև իբր հավաքվել է 1797 թ. ևս, երբ նրանք կայսերական հրամանագրով ազատվել են բոլոր հարկերի ու ծառայությունների կատարումից, մնում է, որոշ չափով չմոռացված։ Այս ամենից պարզվում է, որ այն ամբողջ ծանրությունը, որից նրանք աղերսում են ազատել իրենց, իրականում սահմանված էր միայն 646 մարդու համար 1748 թ., իսկ այժմ նրանց քանակը հասնում է 1930 մարդու։ Ինչպես ասվեց, Ի. Զախարովի զեկուցագիրը կազմվել էր նախապես տրված հարցերին պատասխանների ձևով։ Հերթական 7-րդ պատասխանը վերաբերում է Աստրախանում հայերին ծովային նավեր ունենալու իրավունքի թույլտվության հարցին։ Ինչպես պարզվում է Ի. Զախարովի պատասխանից, այդ հարցի շուրջ երկարատև դրազբություններ են տեղի ունեցել արքունիքի և նախկին նահանգապետ Բեկետովի միջև։ Վերջինս այն պատճառաբանությամբ, թե իբր հայերը իրենց նավերով երթևեկելով Պարսկաստան Ռուսաստանից լուրեր էին տանում այնտեղ, արգելել էր այդ, իսկ օտարերկրացիների հովանավորության դրասենյակը պնդում էր իրավունք տալու վրա։ Եվ երբ հարցի լուծումը տեղափոխվել էր Կառավարող սենատ և թողնվել նրա որոշմանը, ապա վերջինս 1769 թ. նոյեմբերի 29-ի հրամանագրով կարգադրել էր. «Քանի որ 1762 թ. հուլիսի 31-ի կայսերական հրամանով թույլատրված է Աստրախանի նավահանգստում նավեր ունենալ բոլորին՝ առանց սահմանափակման, իսկ 1763 թ. հունիսի 5-ի հրամանով կարգադրված էր, որ այդ նավահանգստին կից վաղուց հետե նավեր կառուցելու իրավունք ունեն միայն տեղի բնակիչներն ու քաղքենիները, բացառելով բոլոր մնացածներին, ապա հայերը ևս՝ և՛ բնակիչները և՛ թե տեղի քաղքենիությունը, դտնվում են նորին կայսերական մեծության հպատակության ներքո, ուստի այդ պատճառով Աստրախանում բնակվող և առևտրով զբաղվող ռուսահպատակ բոլոր հայերին։ Թույլատրվում է կառուցել Կասպից ծովի վրա երթևեկելու ծովային նավեր՝ իրենց ապրանքները տեղափոխելու համար, այնպես ինչպես և ռուս վաճառականները ունեն ծովային նավեր»։

Ներկայացնելով այս ամենը, Աստրախանի նահանգապետ Ի. Զախարովը անցնում է իր մեկնաբանությանը՝ հետևանքում ստեղծված իրադրության մասին։ Նրա կարծիքով, այս հրամանագրից բխում էր՝ անսահմանափակ թույլտվություն բոլոր հայազգիներին, ով որ միայն ի վիճակի էր ունենալ ծովային նավեր, ընդ որում այլևս առանց որևէ խնդրագրի, օգտագործել ռուս մարդկանց որպես աշխատողներ՝ այդ թվում նաև Պարսից ափերում, այս բնագավառում մեկուսացնել ռուս վաճառականներին, բերել իրենց նավերով տարբեր ապրանքներ և արգելված դրամ, վարձու տալ դրանք պարսիկներին, որոնք այս միջոցով իրենց ձեռքը վերցրին անմիջական առևտուրը, Պարսկաստանում նավահանգստից նավահանգիստ տեղափոխել նրանց ապրանքները, մրցակցել ռուս վաճառականների հետ տեղափոխման վարձի շուրջ և կատարել անցանկալի այլ շեղումներ։ Թեև հրամանագրում ասված էր «որոնք դտնվում են մշտական հպատակության ներքո», սակայն հարցիվ թե այս պահպանվում էր, որովհետև հայերից ո՞վ էր մշտական և ո՞վ՝ ժամանակավոր հպատակության մեջ՝ հավաստի տեղեկություններ չկան։ Այժմ, սակայն, հայերին պատկանող ծովային նավերի քանակը, ըստ Աստրախանի նավահանգրսային վարչության տեղեկանքի, ցույց է տրված 7։

Զեկուցագրի 8-րդ կետով Ի. Զախարովը արտահայտում է իր վերաբերմունքն ու դիրքորոշումը 1797 թ. մարտի 1-ի հրամանագրի նկատմամբ՝ դատաիրավական կարգավիճակի հարցում։

Հայկական դատարանը[49], ըստ նաՀանգապետի, իր սկզբնավորումը ստացել է 1744 թ. և որոշ ժամանակ կոչվում էր ռատՀաուզ: 1765 թ. Հունվարի 13-ի կայսերական Հրամանագրով թեև կարգադրվում էր Աստրախանի բոլոր ասիական Համայնքների Համար դատարան՝ դատավորների ընտրության, նրանց նիստերի, գործավարության, նաՀանգային գրասենյակին բողոքարկման և նրանց նկատմամբ տեսուչի սաՀմանումով, սակայն այն չիրագործվեց, քանի որ առևտրով զբաղված թաթարները մտնելով վաճառականության և քաղքենիության դասի մեջ, դրվեցին մագիստրատի ենթակայության ներքո, Հնդիկները չցանկացան մասնակցել նրան, իսկ այստեղ ապրող ռուսաՀպատակ պարսիկները և մնացած ասիացիները այնքան քիչ էին, որ անգամ ցանկության դեպքում էլ ոչ մեկից ընտրել Հնարավոր չէր: Այդպիսով, թեև մինչև այսօր գոյություն ունի այն ընդհանուր դատարան անունով բոլոր աստրախանաբնակ ասիացիների Համար, սակայն ըստ էության այս դատարանը միայն Հայկական է և այլ ասիացիներից ոչ ոք, անգամ ամենափոքր վեճի դեպքում, նրան ենթարկվել չի ցանկանում՝ մնալով մինչև այժմ առանց դատարանի, որովՀետև ըստ իրենց սովորույթի և իրենց դատավորներից բաղկացած դատարան չունեն, իսկ ըստ Հիմնարկությունների ստեղծված դատարաններ՝ լեզվի, դատական կարգի և ռուսական օրենքների չիմացության պատճառով Հրաժարվում են գնալ: 1786 թ. փոխարքայության Հիմնումով, երբ Հայերը գրվեցին գիլդիաների և քաղքենիության մեջ՝ ըստ քաղաքային կանոնադրության, ապա սրանք անցան մագիստրատի իրավասության ներքո, և որի մեջ ատենակալների մի մասը ընտրվեց այս ժողովրդից: ՌուսաՀպատակություն չընդունածները, որոնց բարձրագույն Հրամանով արգելվում էր պարտադրել դրան, ըստ 1788 թ. Հունվարի 26-ի Հրամանագրի, մնացին նախկինի պես Հայկական դատարանի իրավասության ներքո: Ուշագրավ է, որ Ի. Զախարովը Հայկական դատարանի գործավարության մասին իր տպավորությունը արտաՀայտում է որպես ըմշքշուկային ու անբավարար:

Զեկուցագրի 9-րդ կետով նաՀանգապետը ներկայացնում և գնաՀատում է 1797 թ. մարտի 1-ի Հրամանագրի էությունը և 1798 թ. վերջերին տեկա իրավիճակը Աստրախանում: Հրամանագրով Հայերին վերադարձվեցին այն իրավունքները, որ կայսեր նախնիները, ինչպես և Կառավարող սենատը 1744 և 1746 թթ. շնորՀել էին այս Համայնքին:

Կայսերական այս Հրամանագրով

1. Թույլատրվում է նրանց զբաղվել առևտրով՝ վճարելով մաքսատուրքերն ըստ Առևտրական կանոնադրության, ինչպես մյուս օտարերկրացիներին:

Այս որոշման առիթով ասվում է, թե ըստ Աստրախանի նավաՀանգստային մաքսատան տեղեկանքի, վերջին մեկուկես տարում Հայերից չի գանձվել 10 տոկոս կազմող անցումային Հարկը, սակայն Համաձայն 1798 թ. սեպտեմբերի 22-ի Կոմմերց-կոլեգիայի Հրամանի այսուՀետև այն պետք է ռանձվի: Այս տեղեկանքի Հիման վրա Ի. Զախարովը գտնում է, որ Հայերը մեկ տարի և յոթ ամիս շաՀել են, չեն մուծել նշված մաքսը, սոր անշուշտ եկամուտ չէր լինի գանձարանի Համար, իսկ գուցե և այդ կստիպեր նրանց ընդունվելու վաճառականության մեջ:

2. Ընդունել նրանց ժամանակավոր Հպատակության և ոչ՝ մշտական:

Այս դեպքում ևս, ինչպես նախկինում, նրանք չեն Հանգուրժել օրենքի ճշգրիտ կիրառում, քանզի 1748 թ. Հետո եկած և բնակություն Հաստատածների նկատմամբ այս ձևը չի պարտադրվել:

3. Զստիպել նրանց գրանցվելու ռուսական վաճառականության մեջ, ազատելով նրա Հարկերից ու ծառայություններից:

Այս դեռշուայլ թույլտվություններից օգտվեցին նրանք այն ասաիճան, որ դադարեցին վճարել անգամ այն Հարկադրույքը, որը նշանակվել էր 1746 թ.

---

49 Աստրախանի Հայկական դատարանի և դատաստանագրքի մասին Հանգամանորեն տե՛ս Դատաստանագիրք Աստրախանի Հայոց, աշխատասիրությամբ Ֆ. Գ. Պողոսյանի:

հրամանագրով քաղաքային ծառայություններից ու հարկերից փոխարեն, որոնցից նրանք ինչպես նախկինում, այնպես էլ հետո ազատված էին և որը ըստ 1748 թ. նահանգային գրասենյակի որոշման դրված էր ռուսահպատակ հայերի վրա՝ ռուսական վաճառականության օգտին գանձվող 739 ռուբլու փոխանցումով։

Այնուհետև նահանգապետ Ի. Զախարովը ներկայացնում և ծավալուն կերպով բննարկում է հրամանագրի այն կետը, որով կարգադրվում էր. «Ազատել նրանց օթևանի պարտավորությունից, որպեսզի նրանք բնակարանային հարցում դժվարություններ չունենան՝ դրա փոխարեն հավաքելով նրանցից որամ և վարձակալելով այդ նպատակով շենքեր»։

Նշելով այս որոշումը, նահանգապետը ոչ առանց դառնության գրում է. «Եվ այս առատաշնորհումը լիառատ վայելում են, որովհետև ըստ Աստրախանի քաղաքապետից ստացած տեղեկության հայտնի է, որ Աստրախանում բնակարաններում տեղաբաշխված բոլոր գինծառայողները հաշվվում են 3101, իսկ հայերի մոտ՝ նրանց կողմից վարձակալված բնակարաններում, օթևանում են միայն 217 մարդ, որից և կարելի է հետևցնել, որ հայերը քաղաքում ունենալով մեծ քանակով տներ, չափազանց քիչ օթևանի պարտավորություն են կրում։ Իսկ քանի որ Աստրախանում ռուսների տների քանակը 2415 է, իսկ հայերինը՝ 620, ուստի և ակնհայտ է, թե հայերը պետք է օթևան տրամադրեին համապատասխանաբար 620-ից փոքր ինչ ավելի մարդու։ Իսկ եթե հաշվարկը կատարենք ըստ սենյակների քանակի, ապա կպարզվի, որ նրանք պետք է օթևան տային ծայրահեղ դեպքում գոնե կեսին։ Այդպիսի իրավիճակը, անդամ առանց մաթեմատիկական հաշվարկների կհիմնավորվեր նաև արդարությամբ, քանզի հարկերի չվճարումով, քաղաքացիական ծառայություններից ազատ լինելով և օգտվելով վաճառականական ու քաղքենիական բոլոր արտոնություններից, այս պարտավորությունը, որը լոկ միակն է, անտանելի ծանրություն չպիտի լիներ։ Ավելին ...ռազմական ծախսերի համար այստեղ հավաքված դումարից ռուսները մուծել են 49106 ռուբլի 2 կոպ., իսկ հայերը՝ ...12320 ռուբլի և 11 կոպ.»։

Աստրախանի նահանգապետ Ի. Զախարովը իր զեկուցագրի վերջում պատասխանում է առաջադրված ևս հինգ հարցի, որոնք ըստ էության կրկնում են նրա նախորդ կետերի շարադրանքը այլ երանգավորումով ու փաստական նոր նյութ այլևս չեն ավելացնում։ Բացառություն է, թերևս, միայն այն նշումը, թե Աստրախանի հայ բնակչության մի մասը ուներ ռուս ճորտեր, որոնց տիրում էր վաճառքի մասին որավոր հաստատագրերի համաձայն և որով նրանք օգտվում էին ազնվականության առավելություններից[50]։

Ի հեճուկս Ի. Զախարովի զեկուցագրի, որ գրվել էր 1798 թ. դեկտեմբերի 10-ին, 1799 թ. հունվարի 4-ին հրապարակվեց Պավել I-ի հրահանգը Սենատին, որով կարգադրվում էր վերահաստատել Եկատերինա II-ի 1779 թ. նոյեմբերի 14-ին Նոր Նախիջևանի հայ համայնքին տրված առանձնաշնորհումների հոդվարակը «на вечные времена»[51], իսկ նույն թվականի ապրիլի 15-ին՝ ավելի ընդհանրական բնույթ ունեցող շնորհագրի հրահանգ Սենատին՝ որով ընդառաջելով հայ բնակչության խնդրանքին թույլատրում է.

1. Վերջին պարսկական պատերազմի ժամանակ Դերբենտից եկած հայերին 5000 (դեսյատին) անհարմար հողի փոխարեն, որ հաշվարկված էր ընդհանուր 15000 դեսյատինի մեջ, տրամադրել նույն բանակի հող մեծակա պետական հողերից։

2. Մատակարարել նրանց անհրաժեշտ բանակի փայտանյութով։

3. Նրանց, ովքեր արհեստների ու առևտրի նկատմամբ հակումներ ունենալով ցանկություն կհայտնեն բնակվել բաղարում, թույլատրել հիմնադրել այն Ստարին Մոժարի վայրում և անվանել Սուրբ Խաչ (Սվ. Կրեստ)։

---

50 Армяно-русские отношения..., IV, с. 488.

51 ПСЗРИ, XXV, с. 523. Армяно-русские отношения..., IV, с. 499.

4. Ժամերգության, դատարանի և դատաստանի, հարկերի, արտոնյալ տարիների, առևտրի, ռեկրուտային գանձումների և օթևանահարկի առումով առաջնորդվել մեր հրահանգով և նրանց դատել ըստ այն իրավունքների, որոնք տրվել են Նոր Նախիջևանի հայ համայնքին մեր նույն թվականի հունվարի 4-ի հրամանագրով:

5. Տավրիայում բնակվող հայերի՝ նախկինում Թեոդոսիայում ունեցած եկեղեցիների ծխերը սահմանել ըստ մարդկանց այնպիսի քանակի, ինչպիսիք նշանակված են ռուսական ծխականների համար։

6. Հին Ղրիմ քաղաքում բնակվել ցանկացողներին թույլատրում ենք այդ բնակեցումը։

7. Այս քաղաքի մոտ գտնվող հայկական վանքի համար առանձնացված հողամասը հատկացնել նրան և տալ հատակագիծ։

8. Գրիգորիոպոլում բնակվող հայերին խանութների, առևտրի վերականգնման և երկրագործական գործիքներով ու տնտեսությամբ օժտելու համար վերադարձման պայմանով հատկացված գումար չպահանջել։

9. Գրիգորիոպոլում մատակարարված շինարարական նյութեր և նրանից մնացած 8041 ռ. 9 կոպ. գումարը թույլատրել մագիստրատի տնօրինությամբ և նահանգային ղեկավարության գիտությամբ օգտագործել աղքատների և ընչազուրկների բնակարաններ կառուցելու համար. Քառաշ'ն վանքի ու գլխավոր եկեղեցու կառուցման նպատակով տրամադրված գումարները օգտագործել շինարարությունը անհապաղ ավարտելու համար և այլևս նոր գումարներ չպահանջել։

10. 1794 թ. հոկտեմբերի 12-ի զեկուցագրին կից հաստատված Գրիգորիոպոլ քաղաքի զինանշանը պատրաստել և ներկայացնել մեր հաստատմանը։

11. Զեկուցագրում առաջարկված 10-ամյա արտոնյալ ժամանակաշրջանի հաշվարկումը սկսել մեր ներկա հրամանագրի հրապարակման պահից։

12. Ղզլարի հայերին թույլատրվում է քաղաքի շրջակայքում հող և հանդամասեր վերցնել կապալով ըստ օրինակի այլ պետական հողվածների, ներառելով նաև Թերեք գետից ձկնորսությունը։

13. Այն անձանց տները, ովքեր աճեցնում են թթենիներ և զբաղվում շերամապահությամբ, ազատել օթևանի պարտավորությունից, նրանցից գանձել դրամով այնքան ժամանակ, քանի դեռ նրանք կզբաղվեն տնտեսության այդ ճյուղով։

14. Մոզդոկի և Մոժարի հայերի համար հաստատում ենք այն իրավունքները, որոնցից օգտվում են Աստրախանի և Ղզլարի հայերը, ինչպես այս, այնպես էլ 1797 թ. մարտի 1-ի մեր հրամանագրով։

15. Հայկական համայնքներին շնորհված իրավունքներն ու օգուտները համապատասխանեցնել մեր այս հրամանագրի հետ, հավասարել շնորհագրերով, որոնք պատրաստելով Սենատը պետք է ներկայացնի մեզ՝ ստորագրելու[52]։

1799 թ. հոկտեմբերի 28-ին ի վերջո հրապարակվեցին Պավել 1-ի ստորագրած հրովարտակները, որոնք ընդգրկում էին Ռուսաստանի գրեթե բոլոր հայկական խոշոր գաղթավայրերը։ Այդ հրովարտակների հրապարակումը համընկավ դեպի Այսրկովկաս ռուսական բանակի առաքմանը:

Պավել I-ի չորս հրովարտակները կազմված են 1799 թ. ապրիլի 15-ին Սենատին տրված հրահանգի համաձայն և խմբավորված են ըստ Հովսեփ Արղության 1798 թ. սեպտեմբերի 13-ին ներկայացրած «Հայկական բոլոր համայնքների կարիքների մասին» զեկուցագիր-խնդրագրի։ Նոր Նախիջևանի համայնքի վերաբերյալ, որը բացակայում է Պավել 1-ի հրովարտակների մեջ, ուժի մեջ էր մնում նրա 1799 թ. հունվարի 4-ի հրովարտակը, ինչպես այդ առաջարկված էր Հ. Արղության խնդրագրի մեջ։ Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ Նոր Նախիջևանին 1779 թ. նոյեմբերի 14-ին տրված շնորհագիրը՝ հաստատված Պավել I-ի կողմից, համարվել է այն առավելագույնը, որը հակված էր պահանջելու հայ բնակչությունը և կարող էին տրամադրել ռուսական իշխանությունները։ Համեմատությունից պարզվում է, որ հայ համայնքները Ռուսաստանում իրենց ներքին խնդիրներով բաժանվում

[52] ПСЗРИ, т. XXV, с. 619—620. Армяно-русские отношения..., IV, с. 501—502.

էին հինգ խմբի և նրանցից յուրաքանչյուրը, բացի տեղական առանձնահատկություններով թելադրված արտոնություններից, ստացել էր նաև հետևյալ միասնական հոգևոր, դատական ու տնտեսական արտոնությունները, որոնք ընդհանուր էին Ռուսաստանում բնակվող բոլոր հայերի համար.

1. Դավանանքի ազատություն, հայաբնակ գյուղերում եկեղեցիների ու դանդակատների կառուցման ազատություն, որոնք պետք է լինեին ռուսահայոց առաջնորդի միջոցով էջմիածնի աթոռի ենթակայության ներքո:

2. Աստրախանում հիմնվելիք հոգևոր կոնսիստորիայի իրավասության ներքո պետք է գտնվեին ռուսահայոց բոլոր եկեղեցիներն ու հոգևոր և աշխարհիկ հայերը:

3. Հայկական բոլոր խոշոր գաղթավայրերում հիմնվում էին հայկական դատարաններ՝ մագիստրատներ, որտեղ պետք է քննվեին և լուծում գտնեին հայ համայնքի մեջ եղած վիճելի հարցերը՝ հայերեն լեզվով ու հայկական ավանդական ու սովորութային իրավունքի հիման վրա: Վճռաբեկ ու գանգատարկիչ մարմին նշանակվում էր այն նահանգային վարչությունը, որի տարածքում գտնվում էին այդ համայնքները:

4. Ռուսահպատակություն ընդունած հայ բնակչությունը 10-ամյա ժամանակաշրջանով ազատվում էր հարկերի մուծումից, իսկ այնուհետև պետք է մուծեին.

Ա. Վաճառականությունը—տարեկան եկամտի մեկ տոկոսը:

Բ. Քաղքենիությունը և համքարությունների մեջ ընդգրկվածները—յուրաքանչյուր ծխից երկու ռուբլի:

Գ. Երկրագործները (որոնք ունեին 30 դեսյատին հողամաս)—յուրաքանչյուր դեսյատինից տարեկան 5 կոպ.:

5. Ռուսաստանի հայ բնակչությունը ազատվում էր օթևանի պարտավորությունից բնդմիշտ, բացի այն դեպքերից, երբ դորքը կարող էր անցնել հայաբնակ գյուղերի մոտով:

6. Հայ համայնքներն բնդմիշտ ազատվում են ռեկրուտի և պահեստավորման համար դրամի գանձումներից:

7. Հայ բնակչությանը տրվում էր ազատ առևտրի իրավունք ողջ Ռուսական կայսրության սահմաններում, ինչպես ցամաքի, այնպես էլ ծովի վրա՝ առանց մուծելու որևէ ներքին մաքս:

8. Հայ բնակչությունը կարող էր կառուցել և ունենալ ծովային նավեր, գործարաններ, ֆաբրիկաներ, պտղատու այգիներ և այլն:

9. Թույլատրվում էր բոլոր տեսակի գինիների պատրաստումը, գյուղերում՝ փոքր քանակի ֆրանսիական օղու ստացումը, իսկ տակառներով Ռուսաստանի ներքին շուկայում իրացումը թույլատրվում էր առանց որևէ արգելքի:

10. Հրամայվում էր ռուսական կայսրության բոլոր պետական հիմնարկներին առաջնորդվել կայսերական հրամանագրերով և ամեն կերպ օժանդակել ու պաշտպանել հայ բնակչությանը իրենց բազմաբնույթ՝ օրենքով չարգելված գործունեության տեսակների մեջ:

Բացի վերոբերյալ համընդհանուր կարգի արտոնություններից, ինչպես նշվեց, յուրաքանչյուր համայնք ստացել էր նաև մասնավոր բնույթի արտոնություններ ու իրավունքներ, որոնցից առավել էականը քաղաքացիական կայության մասին այն հրամանն էր, որը վերաբերում էր միայն Աստրախանի, Ղոլարի ու Մոզդոկի հայ բնակչությանը: Ըստ այդ հրամանի, թույլատրվում էր Աստրախանում, Ղոլարում և Մոզդոկում բնակվող հայերին ընդունել որպես կայսրության ժամանակավոր հպատակներ և ոչ՝ մշտական: Նշված քաղաքների հայ վաճառականներին չպարտադրել դրանցվելու ռուս վաճառականության մեջ, և ըստ այդմ, ազատել նրանց վաճառականության մուծելիք հարկերից ու կատարելիք ծառայություններից:

Վերջին այս մասնավոր արտոնությունների շնորհումը պայմանավորված էր, ի տարբերություն նախորդ թվարկվածների, ոչ միայն և ոչ այնքան քա-

ղաքական, որքան տնտեսական և հատկապես առևտրական նկատառումներով։ Հարցն այն է, որ չնայած ռուս պաշտոնեության կողմից վարդագույն նկարագրություններին, հայ ժողովրդի ստորին խավերը մնում էին աղքատության մեջ և այդ պայմանավորված էր նաև ռուսական պետական-պաշտոնական քաղաքականությամբ։ Ռուսական բանակի կապիտան Հակոբ Աբրահամյանի Լկարտոոո

շրջանում հատուկ լինելով եվրոպական երկրների համար, որտեղ այն կիրառվում էր սոցիալական հակասությունները մեղմելու նպատակով[56], իր կիրառումը ունեցավ նաև հայկական գաղթօջախներում։ Բուն Հայաստանում այդ նպատակի համար հատուկ դանձանակի ստեղծման մասին մենք առայժմ որևէ վկայություն չունենք գոնե մինչև XVIII դարի վերջն ընկած ժամանակաշրջանի համար՝ եթե բացառենք այն կոնդակները, որոնցով կաթողիկոսը առանձին դեպքերում ծայրահեղ իրավիճակի սեջ հայտնված որևէ անհատի թույլատրում էր շրջադայությամբ ժողովել հանգանակություններ։ Արևմտյան Հայաստանում թերևս միայն Էրզրումի մասին ունենք ուղղակի վկայություն, որ վերաբերում է 1807 թ., թե հացի սղության պատճառով բուշխումը քաղաքում իրականացվում էր իշխանությունների վերահսկողությամբ, սակայն այն ևս՝ ոչ առանց կռվի ու գժգոհության[57]։

Սոցիալական բողոքի և այն հարթելու մասին ձեռնարկումների մասին վկայություններ մեզ են հասել ռուսահայ բոլոր գաղթավայրերից[58]։ Վ. Զուլոյի արշավանքի ընթացքում, հին Շամախու մոտ տեղակայված բանակում էր գտնվում Հ. Արղությանը, երբ սարայավ գրիգորիոպոլցիների 1796 թ. հունիսի 23-ին գրած և իրեն հասցեագրած նամակը, որտեղ պատմվում էր քաղաքում տիրող իրավիճակի մասին։ Նամակում ասված էր. «Քանի մի չարաճճիկ և խառնակիչ անձինք մերս ազատ քաղաքիս յաղագաւ դանդատանաց դիր մատուցին մեր բարերար կուպեռնաթրին, բայց նա իւրով իմաստութեամբն բարկութիւն ոչ արար, այլ սիրով ընկալաւ և խրատական բանիւ զմեզ պատուիրեաց զաղքատսն սիրով և խաղաղութեամբ պահել և հրաման արար, որ տասն հազար չէրթվէրթ ցորեան առանց խարճի դիմացն տաճկի հողն տամք, շահն ագքատաց լինի, այս որքան ողորմութիւն է, որ արար, փուխան բարկութեանն՝ ողորմութիւն եցոյց. այլ մեր նոյն չարեաց աղաղակքրն օրըստօրէ առաւելանայ և քաղաքս խառնակել և կռիւ շարժիլ կամին և զչարիս իւրեանց կրկնել կամին և վշտացուցանել զբարերարդ մեր, թէ որպէս նեղութիւն և վիշտ հասուցին մեզ, ոչ կարեմք սակաւ ինչ սակաւ ի թղթի արձանացուցանել, որ մինչև ցմէկ ժամ ոչ թոզին բարերար կուպեռնաթօրն, որ քաղաքիս մէջն համարձակ շրջի, այլ ուր որ ընթանայր, զկնի խուռն դանկատաւորք շրջէին և զմեզ անհանգիստ առնէին...»։ Այնուհետև քաղաքի գլխավորները, որքան էլ չարությամբ էին լցված բողոքող աղքատ բնակչության նկատմամբ, այնուամենայնիվ փորձում են ելք գտնել և որպես այդպիսին առաջարկում են արագացնել խոստացված բնակարանների կառուցումը, քանզի «բազում աղքատ գոն քաղաքիս, որ անտուն և անտեղ են. քաղաքս այժմ ամենայն հարկաւորութեանց զուրկ է», ուստի խնդրում են նաև իրենց մոտ ուղարկել իրենց հոգեոր հովվին, որպեսզի «խաղաղութիւն և սէր բորոգեսցէ մեզ, զի նովաւ ցնծասցուք և ուրախ լիցուք»[59]։

Գրիգորիոպոլի հայոց սոցիալական պայքարը շարունակվել է նաև հետագա տարիներին և Պավել I-ի 1799 թ. հոկտեմբերի 28-ի Գրիգորիոպոլին ևս արտոնություններ շնորհող հրամանագիրը թեև ժամանակավորապես, սակայն որոշակի դեր է խաղացել այդ պայքարի թուլացման գործում[60]։

Այսպիսով, և՛ Ղրիմի խանությունը թուլացնելու, իսկ ապա գրավելու, և՛ զուտ չբնակեցված սահմանային երկրամասերը բնակեցնելու նպատակով

---

56 Джорж Рюде. Народные низы в истории. 1730—1848, перевод с английского Е. И. Бухаровой и А. О. Зелениной, предисловие и редакция М. А. Барга. М., 1984, с. 60—61.

57 Տե՛ս ՊԲՀ, 1997, 2, էջ 273։

58 Տե՛ս Վ. Բ. Բարխուդարյան. Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն. Երևան, 1967, էջ 369—371, Ж. А. Ананян. Армянская колония Григориополь, с. 104—114.

59 ՄՄ, ԿԴ թղթ. 6, վավ. 87, բնագիր։

60 Ж. Ананян. Армянская колония Григориополь..., с. 113—117.

հայերի տեղափոխման համար ինչպես հույների, այնպես էլ հայերին առաջարկվել էին նախապայմաններ ռուսական կողմից ու ստացվել նաև հայերի առաջադրած պայմանները (կոնդիցիաները)[61]։ Անշուշտ, հայերի պահանջները սահմանափակելու կամ չափավորելու համար է, որ փորձ է արվել խորացնելու նաև թաթարների ու քրիստոնյաների միջև անվստահության մթնոլորտը քրիստոնյաների Ղրիմում մնալու անհնարինության մասին հասարակական կարծիք ձևավորելու համար։ Ինչպես երևում է վավերագրերից, փորձը հաջողվել է, որովհետև եղել են օբյեկտիվ նախադրյալներ[62]։ Տեղափոխվելու մասին հայերի համաձայնության փոխհատուցումն էին նոր նախիջևանին տրված արտոնությունները։ Այդ այն վճարն էր, որ արքունիքը հատուցում էր գաղթականներին։ Շուտով, սակայն, պարզվեց, որ այն բավարար չէր։ Հ. Արղությանը փորձում է ոչ միայն երկարացնել տրված արտոնությունները, այլև դրանք տարածել ողջ ռուսահայոց վրա։ XVIII դարի վերջին այդ քաղաքականությունը ավարտվում է հաջողությամբ։

ПРАВОВОЕ И ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ АРМЯН В РОССИИ В 80—90-ых ГОДАХ XVIII ВЕКА

П. А. ЧОБАНЯН

Резюме

Еще в 1667 г. был заключен торговый договор между армянами Новой Джульфы и Россией, по которому торговая компания получила привилегии в России. Исходя из экономических и политических интересов, Россия в 1724 г. объявила о своем решении взять всех армян под свое особое покровительство и предоставила им некоторые торгово-экономические привилегии. Это продолжалось однако не долго. До последней четверти XVIII века армянское население в России оставалось в основном на тех же правах и привилегиях, что и другие иностранные переселенцы. После вывода армян из Крыма и основания армянского поселения Нового Нахичевана, жители получили ряд привилегий, которые были предоставлены им для облегчения их положения и дали возможность сравнительно быстро восстановить свои разоренные хозяйства. Подобные привилегии были определены впоследствии также для города Григориополя. В статье приводятся факты, указывающие на ту целенаправленную политику, которую проводили армянские деятели в России в 80—90-ых годах для достижения того, чтобы те же привилегии были распространены на другие армянские поселения. Цель эта достигается уже в конце XVIII века. Вопреки определенному противодействию местных властей и российских купцов (особенно в Астрахани), 28 октября 1799 г. были провозглашены указы императора Павла I, распространяющиеся на все слои армянских поселений и обществ России. Эта политика играла не второстепенную роль в деле привлечения армян на сторону России накануне присоединения Восточной Армении к России.

---

61 Տե՛ս Վ. Դիլոյան. Հայերի հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից (XVIII դարի երկրորդ կես). Երևան, 1966, էջ 144—148։ Վ. Բ. Բարխուդարյան. նշվ. աշխ., էջ 72—73։

62 Վ. Բ. Բարխուդարյան. նշվ. աշխ., էջ 28—30։